

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒ ԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԿԱՏԱՆԻ

ԳՐԱՏՈՒՆ ՄԵՍՐՈՊ

ՖԻԼԻՊԷ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. ՍԷԹԵԱՆ

1924

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ա. Մ.

ԳՐԱՏՈՒՆ ՄԵՍՐՈՊ


ՖԻԼԻՊԷ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. ՍԷՅԵԱՆ

1924

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ



1.—ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆԸ, ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ.— Հայաստան կը կոչուի այն երկիրը, ուր Հայերը իբրեւ ազգ ապրած են, եւ ունեցած են իրենց կառավարութիւնը:

Օտար ժողովուրդները մեր երկիրը կոչած են Արմենիա կամ Էրմենիսան, իսկ զմեզ կոչած են Արմեն կամ Էրմենի:

Պատմական Հայաստանի մասերը եղած են 1.—ՄԵԾ ՀԱՅՔ, 2.—ՓՈՒՔԻ ՀԱՅՔ, 3.— ՄԻՋԱԳԵՏՔ ՀԱՅՈՅ եւ 4.—ԿԻԼԻԿԻԱ:

Դարերու ընթացքին Հայաստան անուանուած երկիրը եղած է մեծ կամ փոքր, տարածուած կամ ամփոփուած: Երբեմն եղած է բոլորովին անկախ, երբեմն կիսանկախ, եւ երբեմն դրացի մեծ պետութիւններու միջեւ բաժնուած:

Այսպէս՝ Մեծն Տիգրանի օրով, Քրիստոսէ 50 տարի առաջ՝ Հայաստան ընդարձակ միապետութիւն մըն էր: Իսկ Քրիստոսէ 800 տարի առաջ Հայաստանի հիւսիսային մասը կը կոչուէր Ուրարսու, հարաւային մասը՝ Նաիրի: Քրիստոսէ ետքը 400 թուականին, Ս. Սահակի, Ս. Մեսրոպի ժամանակ, Հայաստան երկու մասի

բաժնուած էր եւ կը կոչուէր Պարսկական Հայաստան եւ Յունական Հայաստան. իսկ Ընդհանուր Պատերազմէն առաջ (1915էն առաջ) մեր երկիրը երեք մասի բաժնուած էր. 1.—Ռուսահայաստան, 2.—Ռուսահայաստան եւ 3.—Պարսկահայաստան: 1918էն ետք Ռուսահայաստանի սահմաններուն մէջ հաստատուեցաւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ:

2.—ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.— Հին Հայաստանի բնական սահմաններն են. հիւսիսէն՝ Պոնտական լեռները, Կուր գետը. արեւելքէն՝ Կասպից Ծովի եւ Ատրպատականի դաշտերը. հարաւէն՝ Կորդուաց լեռները, Միջագետք, Սիւրիա եւ Միջերկրական Ծով. արեւմուտքէն՝ Անատոլի կամ Փոքր Ասիայի դաշտերը եւ Անտիտորոս լեռները:

3.—ՀԱՅԱՅՏԱՆԻ ԼԵՌՆԵՐԸ.— Հայաստան լեռնուտ երկիր մըն է եւ կը ձեւացնէ ընդարձակ բարձրաւանդակ մը: Ունի բազմաթիւ լեռնաշղթաներ եւ բարձր գագաթներ: Անոր գլխաւոր մեծ լեռնաշղթաներն են. հիւսիսային արեւմտեան կողմը՝ Պոնսական Պարր, հիւսիսային արեւելեան կողմը՝ Փոքր Կովկասը, հարաւային կողմը՝ Հայկական Տօրոսը եւ Կորդուաց լեռները, արեւմտեան կողմը՝ Փոքր Հայքի լեռները, Անիսօրոս եւ Տօրոս: Իսկ Հայաստանի կեդրոնը կը տարածուի Հայկական Պարր:

4. ՄԱՍԻՍ.— Հայկական Պարի ամէնէն բարձր կատարն է Մասիսը, զոր օտարները կը կոչեն Արարատ: Ան բարձր է 5160 մետր. Եւրոպայի ամէնէն բարձր լեռնէն՝ Մոնպլանէն ալ բարձր է: Անոր գագաթը միշտ ծածկուած է ձիւնով: Մասիսը ունի երկու հսկայ գագաթներ, իրարու մօտ. Մեծ Մասիս եւ Փոքր Մասիս, որ ունի 3850 մետր բարձրութիւն: Այս բարձր

գագաթները մարած հրաբուխներ են: Վերջին անգամ բռնկած է 1840ին եւ կործանած է Ակոռի շէն գիւղը: Արարատ սրբազան լեռ մըն է, թէ մեզի եւ թէ ուրիշ ազգերու համար: Նոյի տապանը հոն հանգչած է: Նոյ Նահապետ հոն բնակած է եւ բոլոր մարդիկ անկէ ցրուած են: Մեր նախնիքները այս լեռը կը կոչէին «Ազատ Մասիս»: Բազմաթիւ ճանապարհորդ գիտուններ ջանացած են անոր գագաթը ելնել եւ ուսանք յաջողած են: Հոն ելնող առաջին Հայր եղած է Խաչատուր Աբովեան:




Արարատի լեռը



Հայաստանի լեռները (Համրաֆաւրսկս)

5.—ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԻ ՃԻՒՂԵՐԸ.— Արարատի բովանդակներն և ընդարձակ լեռներ, որոնք կը ձեւացնեն Հայկական Պարը, որուն գլխաւոր մեծ շղթաներն են. 1.—Այրարատեան շղթայ, 2.—Ծաղկէոյ լեռներ, 3.—Բիւրակնեան լեռներ, 4.—Վանայ լեռներ, 5.—Բարձր Հայքի լեռներ:



Վարազայ վանքը

Այրարատեան շղթային ամէնէն բարձր կատարներն են Բարթոյ և Սուկաւեհ լեռները: Ծաղկէոյ լեռներուն նշանաւոր գագաթներն են Փոնդրակ, որ տակաւին կենդանի հրաբուխ մըն է և Նպաս, որուն գագաթին վրայ Մեծն Ներսէս աղօթեց և հայ բանակը յաղթեց Չիրաւ Ղաշտին մէջ: Բիւրակնեան լեռները ունին բազմաթիւ լիճեր, որոնց մէկէն կը բխին Երասխ գետը և Եփրատի մէկ ճիւղը: Վանայ լեռներուն ամէնէն նշանաւոր գագաթներն են Սիփան կամ

Գոռոզ լեռ, որ վանայ ծովին հիւսիսային կողմը կանգնած է, եւ վարագայ լեռը, որ վան քաղաքին մօտ կը գտնուի եւ որուն վրայ շինուած է հռչակաւոր վարագայ խաչի վանքը:

Բարձր Հայքի լեռներուն մէջ նշանաւոր գագաթ մըն է Գոհանամ կամ Սեպուհ լեռը, ուր եղնած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

Բարձր Հայքի լեռներուն հիւսիսային կողմը, փոքր Կովկասի եւ Պոնտական Պարի միջեւ կը տարածուին հռչակաւոր Տայոց լեռները, հայ քաջերու ապաստանարանը:


6.—ՓՈՔՐ ԿՈՎԿԱՍԻ ՃԻՒՂԵՐԸ.— Փոքր Կովկասը Մեծ Կովկասի զուգահեռական ընդարձակ եւ մեծ լեռնաշղթայ մըն է, որ մեծ մասամբ կը տարածուի Կուր եւ Երասխ գետերուն միջեւ: Ունի հետեւեալ գլխաւոր լեռնագօտինները. 1.—Վրահայոց կամ Գուգարաց լեռներ, 2.—Վանանդի կամ Կարսի լեռներ, 3.—Սիւնեաց կամ Զանկեզուրի լեռներ, 4.—Արցախի կամ Ղարապաղի լեռներ եւ 5.—Արագած: Այս բոլոր լեռներուն վրայ կան բարձր ու մարած հրաբուխի գագաթներ:

Արագած կամ Ալագեազ գեեցիկ գագաթ մըն է, չորս ցրուած գլուխներով, սիրուն մէկ երկու լիճերով: Կանաչազարդ կողեր ունի, խոտաւէտ ու ծաղկաւէտ լեռ մըն է: Ունի զով եւ վճիտ աղբիւրներ: Անոր բարձրութիւնն է 4036 մետր: Մասիսի պէս մարած հրաբուխ մըն է Արագածը:

7.—ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՕՐՈՍԻ ՃԻՒՂԵՐԸ.— Հայաստանի հարաւային կողմը տարածուած մեծ լեռնաշղթային գլխաւոր լեռնագօտիններն ու բարձր գագաթներն են

1.—Սասնոյ լեռներ, 2.—Նեբրովք եւ Գրգուռ լեռները, 3.—Խոյթի լեռները, 4.—Ռեսուներաց լեռները:

Սասնոյ լեռները կը տարածուին Մուշի հարաւային կողմերը, եւ անոնց ամէնէն բարձր մէկ գագաթն է Անտոխ լեռը: Նեբրովք վանայ Ծովին արեւմտեան եզերքը բարձր գագաթ մըն է, մարած հրաբուխ մը, որուն կատարը լիճ մը կայ: Նեբրովքի հարաւային կողմը կը բարձրանայ Գրգուռ լեռը, անմատչելի գագաթով:



Աղթամար կղզին վանայ ծովին մէջ

Ռեսուներաց լեռներու ամէնէն նշանաւոր գագաթներն են Կապուսկող կամ Ընձափեարս եւ Արսու լեռները:

8.—ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏԵՐԸ.— Հայաստանի այս բարձր լեռնաշղթաներուն միջեւ կան նշանաւոր լեռնադաշտեր, որոնք պտղաբեր եւ արգասաւոր հովիտներ են: Նշանաւորներն են 1.—Արարատեան դաշտ, 2.—Շիրակի դաշտ, 3.—Բագրեւանդի կամ Ալաշերտի դաշտ, 4.—Մոշ դաշտ, 5.—Խարբերդի դաշտ, 6.—Տիգրանակերտի դաշտ, 7.—Կիլիկիոյ դաշտերը, 8.—Փոքր Հայքի դաշտերը եւն.:

9.—ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻՃԵՐԸ.—Հայաստանի մէջ կան աղի եւ անուշ ջուրի լիճեր: Աղի լիճերն են ա) Վանայ Ծով, բ) Ուրմիոյ ծով, գ) Արեւակի լիճ:

Վանայ Ծովը հին ատեն կը կոչուէր նաեւ Տոս-



Բիւրակնեան լիճերէն մէկը


պանայի Ծով, Բգնուկնեաց Ծով, Նաիրիի Ծով եւն.: Այս ծովին մէջ կան չորս կղզիներ, ա) Աղթամար, բ) Լիմ, գ) Առսեր, դ) Կսուց: Աղթամար կղզին մէջ շինուած է Աղթամարի վանքը, Ս. Խաչ եկեղեցիով:

Ուրմիոյ Ծովուն ջուրերը շատ աղի են, որովհետեւ գետերը, որ ծով կը թափին, աղի հողերու մէջէն կ'անցնին:

Արեւակի լիճը կը գտնուի Վան քաղաքին հիւսիս-արեւելեան կողմը, եւ շատ աղի է:

Հայաստանի անուշ լիճերու գլխաւորներն են ա) Գեղամայ ծով, բ) Ծովակ հիւսիսոյ կամ Զըլսըր լիճ, գ)

Փարվանա լիճ, դ) Թորթուլի, ե) Գայլասուայ կամ Պալըզ կէօլ, զ) Նազիկ եւ է) Ծովի լիճերը: Գեղամայ ծովը կ'ըսուի նաեւ Սեւանայ լիճ: Ունի կղզի մը Սեւան ա-




Թորթուլի լիճը

նունով, որուն վրայ կայ Ս. Ասուածածին վանքը եւ եկեղեցին: Թորթուլի լիճէն գետ մը կ'ելնէ Թորթուլ գետ անունով, որ ունի գեղեցիկ ջրվեժ մը նոյն անունով: Գայլասուայ լիճը կը գտնուի Այրարատեան շրջ-թային վրայ: Նազիկ լիճը կը գտնուի Վանայ ծովին հիւսիս-արեւմտեան կողմը: Իսկ Ծովի կը գտնուի Խարբերդ քաղաքին մօտ:

10.—ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՏԵՐԸ.—Հայկական բարձրա-լանդակէն ծնունդ կ'առնեն եւ կը թափին զանազան ուղղութեամբ բազմաթիւ գետեր: Հայաստանի ամէնէն նշանաւոր գետերն են Երասխ, Կուր, Եփրատ, Տիգրիս, ձորոխ, Իրիս, Ալիս, Սիհուն, ձիհուն:

Երասխա. — Երասխը կը կոչուի նաեւ Արախա: Հայե-
րը, իբրեւ իրենց բուն գետը, զայն կոչած են «Մայր
Արաքս»: Երասխը կը բխի Բիւրակնեան լեռներէն, եւ
կ'անցնի Բասենի, Այրարատեան դաշտերէն, կը միա-
նայ Կուր գետին եւ կը թափի Կասպից ծով: Ունի 1100



Թորթուսի ջրվեժը

քիլոմետր երկայնութիւն: Երասխը կ'ընդունի բազմա-
թիւ գետակիցներ, որոնց գլխաւորներն են. 1. — Ա-
խուրեան, որուն վրայ շինուած են Անի, Ալեքսանդրա-
պոլ քաղաքները: Անին այժմ աւերակ է: 2. — Քասաղ

գետ, որուն մօտիկ շինուած է Էջմիածնի վանքը: 3. —
Հրազդան գետ, որուն վրայ շինուած է Երեւան, Հա-
յաստանի Հանրապետութեան մայրաքաղաքը: 4. —
Կարմիր գետ, որուն մէջ կը թափի Տղմուս գետակը:

Կուր. — Կուր գետը Հայաստանի հիւսիսային սահ-
մանը կը գծէ: Ունի 1200 քիլոմետր երկայնութիւն: Կը
բխի Արտահանի մօտերէն եւ կը թափի Կասպից ծով:
Ունի բաւական կարեւոր ճիւղեր. ինչպէս՝ Խրամ գետ,
Չորագետ, Թարթառ, Խաչէն գետակները:

Եփրատ. — Փոքր Ասիայի ամէնէն մեծ գետն է:
Ունի երկու մեծ ճիւղեր, Ա. Արեւմտեան Եփրատ եւ Բ.
Արեւելեան Եփրատ կամ Արածանի: Արեւմտեանը կը
բխի Բարձր Հայքի լեռներէն եւ կ'անցնի Էրզրումի մօ-
տէն, կը թրջէ Երզնկա, Անի (Քէմախ), Ակն քաղաք-
ները եւ Խարբերդի մօտ կը միանայ Արածանիի հետ:
Իսկ Արեւելեան Եփրատը կամ Արածանին կը բխի
Ծաղկէոյ լեռներէն եւ կը թրջէ Ալաշկերտի, Մանազ-
կերտի, Մուշի, Բալուի ու Խարբերդի դաշտերը: Արա-
ծանիի բխած կողմերը կը կատարուէին հին Հայերու
Նաւասարդեան Տօները: Մուշի մօտ, այս գետին վրայ
շինուած էր հին Աւսիթաս քաղաքը, ուր թաղուած է
Ս. Սահակ հայրապետը: Եփրատ գետը կ'իջնէ հարաւ
ու կը միանայ Տիգրիս գետին, կը կազմեն Շաք-էլ-Ա-
րապը, որ կը թափի Պարսից ծոց: Եփրատ ունի 2800
քիլոմետր երկայնութիւն:

Տիգրիս. — Եփրատի նման կը բաղկանայ երկու
ճիւղերէ. Արեւելեան Տիգրիս եւ Արեւմտեան Տիգրիս:
Ասոնք կ'ընդունին բազմաթիւ գետակներ եւ իրար
միանալով կը կազմեն Տիգրիս գետը: Տիգրիս ունի 1250
քիլոմետր երկայնութիւն:

Ճորոխ. — Կը բխի Սպերի լեռներէն եւ կ'անցնի

Քարերդ, Սպեր, Արդուին քաղաքներէն եւ Պաթոււմի քովէն Սեւ ծով կը թափի: Կ'ընդունի Օլքի գետը, որուն մէջ կը թափի թորթում գետակը:

Իրիս. — Կը բխի Փոքր Հայքի լեռներէն եւ կը թափի Սեւ ծով: Կը թրջէ Թոֆաս (Եւդոկիա), Ամասիա քաղաքները:

Ալիս. — Մեծ գետ մըն է, կը բխի հայկական լեռներէն եւ կը թափի Սեւ ծով. կը թրջէ Սեֆասիա եւ Կեսարիա քաղաքները:

Սիհուն. — Կը բխի Անտիտորոս լեռներէն եւ կը թափի Միջերկրական ծով: Հին անունն էր Սարոս: Կը թրջէ Հանրն, Ասանա քաղաքները:

Ճիհուն. — Հին անունն է Պիւռամոս, որ ծնունդ կ'առնէ Տորոսի լեռներէն եւ կը թափի Միջերկրական ծով:

11.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼԻՄԱՆ. — Հայաստան լեռնուտ երկիր մ'ըլլալով, այլազան կլիմայ մ'ունի: Դաշտերուն մէջ, ծովեզերքները տաք ու մեղմ են. իսկ բարձրերը ցուրտ, չոր եւ խիստ: Հայաստանի մէջ վայրեր կան ուր յաւիտենական գարուն եւ ամառ կը տիրէ, ինչպէս Հայկական Միջագետքը, Կիլիկիոյ դաշտերը եւլն.: Իսկ տեղեր ալ կան ուր խիստ ու նրկարատեւ սառնամանիք կը տիրեն. ինչպէս լեռներուն գագաթները եւ կողերը: Չմեռը Հայաստանի մէջ տեղ կայ ուր կը տեւէ մինչեւ 6-8 ամիս, — Տէրսիմի, Այրարատեան, Փոքր Կովկասի լեռներուն վրայ, — ուրիշ տեղ 5, 4, 3 ամիս, կամ աւելի քիչ:

Օդը՝ Հայաստանի մէջ՝ ամէն տեղ առողջ է, որովհետեւ չոր է:

Մեր երկիրը մեծ ծովերէն հեռու ըլլալուն եւ իր չորս կողմը բարձր լեռներով շրջապատուած ըլլալուն

համար, ծովէն փչող խոնաւ հովեր չունի, եւ անձրեւներ քիչ կը տեղան: Անձրեւի տարեկան միջին խտութիւնը կէս մէքր խորանարդ հազիւ կը բարձրանայ:

Հայաստանի կլիման ցամաքային է. այսինքն չոր է եւ խիստ, ձմեռը շատ ցուրտ, ամառը շատ տաք: Բայց տանելի կլիմայ մըն է:

12.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՅՍԵՐԸ. — Հայաստան ամէն տեսակ կլիմայի յատուկ բոյսեր ունի: Տափ կլիմայի, բարեխառն եւ ցուրտ կլիմաներու յատուկ բոյսեր եւ տունկեր կը գտնուին մեր երկրին մէջ եւ կրնան աճիլ:

Անտառներ շատ չունի Հայաստան, որովհետեւ մեծ մասամբ անխնայ կոտորուած են անոնք, եւ շատ տեղեր ալ բնականէն անտառ չաճիր՝ անձրեւ շատ չգալուն համար: Հիւսիսային լեռները ընդհանրապէս անտառուտ են. (Փոքր Կովկասի, Պոնտական լեռներու վրայ եւայլն): Կը բուսնին եղեւին, մայրի, կաղնի, ընկուզենի, հաճարի եւայլն:


Հայաստանի դաշտերուն եւ բարձրաւանդակներուն վրայ կ'աճին ցորեն, գարի, վարսակ, հաճար, բամբակ, կանեփ, վուշ, ծխախոտ: Ունի ամէն տեսակ պտղատու ծառեր ու ծաղիկներ: Նշանաւոր են ծիրանին, կեռասենին, տանձենին, խնձորենին, որթատունկը, սալորենին, թուզը, ձիթենին, ծիրանը, դեղձը, թութը, նուշը, նուռը, սերկեւիլը, բալը, սալորը եւլն. եւլն.:

Ընդեղեկներէն կ'աճին լուբիա, սիսեռ, ոլոռն, դսպ, բակլայ: Բանջարեղեկներէն՝ կաղամբ, գետնախնձոր, սոխ, սխտոր, հակնդեղ, ձմերուկ, սեխ: Ծաղիկներէն՝ վարդ, շուշան, կակաչ, մեխակ, յասմիկ, աղբրանցարիւն եւայլն:

14.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ. — Մեր երկիրը հարուստ է նաեւ կենդանիներով:

Վայրի կենդանիներէն յիշենք արջը, գայլը, աղ-
ուէսը, բորենին, վարազը, կուղբը, վագրը, եղջերուն,
այծեամը, եղնիկը, նապաստակը, ճագարը, սամոյրը,
աքիսը, եւայլն:

Թռչուններէն յիշատակենք կռունկը, արագիւրը, ծի-



Վանի կասուններ

ծեռնակը, կարապը, ճայը, վայրի բաղերը, սագերը,
փասիանը, ազուաւը:

Չուկերէն շատ տեսակներով հարուստ են յայտա-
տանի լիճերն ու գետերը. նշանաւոր են կարմրախայ-
տը, տառեխը (Վանի), լոբը, իշխանաձուկը, կողակը,
եւայլն:

Համբաւաւոր են նաեւ Հայաստանի մեղուն ու
մեղրը:

Ընտանի կենդանիներէն կարեւոր տեղ մը կը զբա-
ւեն ծին, ոչխարը, այծը, կովը, եզը, գոմէշը, էշը, ջո-
րին, ուղտը, կատուն:

15.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԵՐԸ.— Բաւական հարուստ

հանքեր կան Հայաստանի մէջ: Նշանաւոր են Կողբի,
Կաղզուանի, Նախիջեւանի, Մուշի աղուճակի հանքերը
(քարաղ). Սիւնիքի, Լոռիի պղնձահանքերը. Մուշի, Վա-
նի, Էրզրումի ցաւքահանքերը, որոնք չեն շահագործը-
ւած. Օլթիի ածխահանքերը եւայլն: Հայաստան ունի
նաեւ երկաթ, արծաթ, կապար, ոսկի, հանքային ջու-
րեր, եւ հարուստ փայտահանքեր:



Մ Ե Ր Հ Ա Յ Ք

16.— Մ Ե Ր Հ Ա Յ Ք Ի Ն Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր Ը.— Հին Հայաս-
տանի ամենամեծ մասը կոչուած է Մ Ե Ր Հ Ա Յ Ք: Ան
բաժնուած է տասներեւից ցահանգներու: Այդ նահանգ-
ներն էին.

- 1. Բարձր Հայք, 2. Չորոզ Հայք, 3. Աղձնիք, 4. Տուրուբերան, 5. Մոկք, 6. Կորնայք, 7. Պարսկահայք, 8. Վասպուրական, 9. Սիւնիք, 10. Արցախ, 11. Փայ-
սակարան, 12. Ուտի, 13. Գուգարք, 14. Տայք, 15. Այ-
րարան:

Ա. ԲԱՐՉՐ ՀԱՅՔ.— Այս նահանգը կը տարածուէր
այժմեան Էրզրում, Երզնկա քաղաքներուն շուրջը: Լեռ-
ներուն բարձրութեան պատճառով կոչուած է Բարձր
Հայք: Արդարեւ այս բարձր երկիրէն կը բխին եւ կը
վազեն զանազան ուղղութեամբ գետեր. Երասխի մէկ
ճիւղը, Եփրատ, ձորոխ, եւայլն: Ամէնէն նշանաւոր գա-
ւառներն են. 1. Կարին, 2. Եկեղեաց, 3. Դարանաղի:

Կարին, այժմ Էրզրում, Թեոդոսուպոլիս քա-
ղաքով: Արգ-րում կոչած են Արաքները, կը նշանակէ

«Հոռոմներու բերդաքաղաք», որովհետեւ Թէոդոս կայս-
րը շինել տուաւ զայն:

Եկեղեաց գաւառը հին ատեն կը կոչուէր նաեւ
Անահիսի գաւառ, որովհետեւ հոն կը պաշտուէր Անա-
հիս զիցուհին: Այժմ Երզնկա:

Գարանաղի այժմ կը համապատասխանէ Քեմախի,
Երզնկայի արեւմտեան կողմը: Քէմախ քաղաքը հին
Հայոց Անի ամրոցն էր: Այս գաւառին մէջ նշանաւոր
են Սեպուհ լեռը, ուր Ս. Գրիգոր եզնեցաւ, Թորդան
գիւղը, ուր թաղուած են Ս. Գրիգորի զաւակները:

Բ.—ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔ.— Հին ատեն այս նահանգը
կոչուած է Հայոց մէջ Ծոփաց աշխարհ, ուր կ'իշխէին
հայ թագաւորներ: Նշանաւոր գաւառներն են

1. Հանյիք, այժմ Խարբերդ:
2. Խորեան, այժմ Քղի կամ Կեղի:
3. Հաւսեան, այս գաւառը Արածանիի հովիտին
մէջն էր, բարբեր. հայ Արշակունի թագաւորները ի-
րենց սերունդները կը բնակեցնէին հոս:
4. Բալահովիտ, նոյնպէս Արածանիի հովիտին մէջ,
Հանծիթի եւ Հաշտեանքի միջեւ. Բալու քաղաքով:

Գ.—Աղձնիք.— Այս նահանգը կը համապատաս-
խանէ այժմ մեծ մասամբ Տիարպէփը նահանգին: Հին
Հայոց մէջ կարեւոր երկիր մըն էր այս եւ անոր վրայ
կը նստէր փոխարեայ մը (Բդեշխ): Այս նահանգին
զխաւոր գաւառներն են. 1. Սասունի իր բարձր լեռ-
ներով եւ խրոխտ բնակիչներով. 2. Սալնոյ ձոր այժմ
Բաղէ կամ Պիթլիս:

Դ.—ՏՈՒՐՈՒԲԵՐՍ.Ն.— Այս նահանգը կը տարած-
ուէր Վանայ ծովին արեւմտեան կողմը: Նշանաւոր
գաւառներն էին. 1. Խոյթ, 2. Տարօն, 3. Հարֆ, 4. Ապա-
հունիք, 5. Բզնունիք:

Խոյթ Սասունի կից լեռնուտ երկիր մըն է:
Տարօն նշանաւոր գաւառ մըն էր. Մամիկոնեան-
ներու հայրենիքը: Այժմ Մուշի դաշտը: Մուշի մօտ,
Արածանիի վրայ շինուած էր Աւսիւս քաղաքը, այժմ
Տերք գիւղ, ուր թաղուած է Ս. Սահակ: Այս գիւղին
մօտն է հռչակաւոր Ս. Կարապետի վանքը. «Մշու Սուլ-
թան Ս. Կարապետ» յորջորջուած:

արֆ այժմ Պուլանք: Այս գաւառին մէջ կը յիշ-
ուի Հայկի շինած գիւղը՝ Հայկաշէն:

Բզնունիք՝ Վանայ ծովին եզերքը երկիր մըն էր,
որուն անունով ծովն ալ կոչուած է «Բզնունեաց ծով»:

Ե.—ՄՈՒԿ.— Զ.—ԿՈՒՃԱՅՔ.— Այս երկու նահանգ-
ները կը գտնուէին Հայաստանի հարաւային կողմը,
Տիգրիս գետին հովտին մէջ: Մոկքի մէջ էր Իւայր գա-
ւառը, իսկ Կործայքի մէջ՝ Կորդուք գաւառը. հին Քիւր-
տերու անունով:

Զ.—ՊԱՐՍՍԿԱՀԱՅՔ.— Այս նահանգը կը տարած-
ուէր Ուրմիոյ ծովին շուրջ, այժմ Սալմաս գաւառ:
Կարեւոր գաւառներն էին Հեւ եւ Զարեանդ:

Ը.—ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ.— Այս նահանգը ընդարձակ
երկիր մըն էր, Վանայ ծովին արեւելեան կողմը, մինչեւ
Երասխ գետը: Արծունի նախարարներու երկիրն էր:
Տասներորդ դարուն եղաւ թագաւորութիւն մը, (1021ին)
իսկ ԺՍ. դարուն կործանեցաւ՝ երբ Սենեֆերիս Արծ-
րունի թագաւորը գնաց Սեբաստիա նստեցաւ:

- Նշանաւոր գաւառներն են
1. Ռոսունիք, 2. Տոսք, 3. Անձեւացիք, 4. Աղբակ,
 5. Առքեանի, 6. Արսազ, 7. Մարանդ, 8. Գողթն, 9.
- Նախիջեւան եւայլն:

Ռոսունիք կը գտնուի Վանայ ծովին հարաւային
կողմը, այժմ կը կոչուի Ուսան: Այս գաւառին մէջ

նշանաւոր է ընծաբեարս կամ կապուսկող սարը, որուն կողին վրայ շինուած է Ս. Յակոբի վանքը: Տոսք գաւառը կը տարածուէր վան քաղաքին շուրջ: Անոր անունով վանայ ծովը հին ատեն կը կոչուէր Տոսքանայի ծով:

Անձեւացեաց գաւառը կը տարածուէր վանայ ծովին հարաւ-արեւելեան կողմը: Այժմ կը կոչուի Խոշապ որուն մէջէն կ'անցնի եւ վանայ լիճ կը թափի համանուն գետը: Խոշապ գետի հովիտը կը կոչուէր Հայոց Ձոր, ուր տեղի ունեցած է, ըստ աւանդութեան, Հայկի եւ Բելի պատերազմը:

Աղբակ այժմ կը կոչուի Պաշալէ, Պարսիկ սահմանագլուխին վրայ: Հոս կայ նշանաւոր Ս. Բարթողիմէոսի վանքը:

Առբերանի վանայ ծովին հիւսիս-արեւելեան կողմը, Բերկի քաղաքին շուրջ:

Արսազ Առբերանի գաւառին հիւսիս-արեւելեան կողմը, նշանաւոր գաւառ մըն էր, ուրկէ կը հոսի Տղմուս գետը: Հոս նահատակուած են Թաղէոս առաքեալը եւ Սանդուխտ կոյսը: Հոս տեղի ունեցած է վարդանանց պատերազմը:

Մարանդ այժմ կը գտնուի Պարսից ձեռքը:

Գողթն գաւառը կը տարածուէր Երասխ գետին հարաւ. աղեղին մէջ. այժմ Ագուլիս, Օրսուպաս: Նշանաւոր են Գողթնի այգիները, գինին, եւ հին երգիչները:

Նախիջեւան կը տարածուէր Գողթնի արեւմտեան կողմը, Երասխ գետի հովիտին մէջ:

Թ.— ՍԻՆԻՔ կամ ՍԻՍԱԿԱՆ.— Այս նահանգը կը տարածուէր Գեղամայ ծովին եզերքներէն մինչեւ Գողթըն գաւառը, մինչեւ Երասխ գետը: Գլխաւոր գաւառներն են 1. Գեղարբունիք, 2. վայոց Ձոր, 3. Երնջակ, 4. Ձորք:

Գեղարբունիք կը տարածուէր Գեղամայ ծովին արեւմտեան կողմը. այժմ Նոր Պայազիս:

վայոց Ձոր կը տարածուէր Գեղամայ ծովին հարաւային կողմը, այժմ Դարալակեազ:

Ձորք այժմ կը կոչուի Ղափան:

Ժ.— ԱՐՅԱԽ.— Այս նահանգը այժմ կը համապատասխանէ Ղարապաղի: Հին ատեն կը կոչուէր նաեւ Փոքր Սիւնիք:

ԺԱ.— ՓԱՅՏԱԿԱՐԱՆ.— եւ ԺԲ.— ՈՒՏԻ.— Այս երկու նահանգները կը տարածուէին Երասխի արեւելեան կողմը, Կուր գետի ստորին հովիտները, Կասպից ծովին եզերքը: Ուտի՛ն մէջ կային Գարդման եւ Շակառն գաւառները:

ԺԳ.— ԳՈՒԳԱՐՔ.— Այս նահանգը սահմանակից էր վրաստանի: Գլխաւոր գաւառներէն էին 1. Չորոփոր, 2. Ծոփոփոր, 3. Տաշիք, 4. Ջաւախք, 5. Արսահան:

Չորոփորի մէջ նշանաւոր են Հաղբաս եւ Սանահին վանքերը: Տաշիք այժմ Լոռի գաւառին կը համապատասխանէ, Ջաւախք՝ Ախալքալաքի:

ԺԴ.— ՏԱՅՔ.— Լեռնուտ երկիր մըն էր այս նահանգը, ուր կ'ապաստանէին մեր հին քաջերը, երբ պէտք զգային տեղի տալ գերազանց ուժերու առջեւ: Այս նահանգին մէջ էր Պարսիզացփոր գաւառը, որ այժմ կը կոչուի Օլթի:

ԺԵ.— ԱՅՐԱՐԱՏ.— Հայաստանի մեծ նահանգներէն մէկը, որ ամէնուն մէջտեղը կը գտնուէր: Ունի պատմական բազմաթիւ վայրեր, գլխաւոր գաւառներն են. 1. Բասեն, էրզրումի արեւելեան կողմը, 2. Բագրեւանդ, այժմ Ալաշկերտ, նշանաւոր դաշտ, ուրկէ կ'անցնի Եփրատ գետը: 3. Ծաղկոսն, Ծաղկէոյ լեռներուն ստորոտը, Նպատ լեռան շուրջ: 4. Շիրակ, նշանաւոր էր այս

գաւառին պտղաբերութիւնը: Այս գաւառին մէջէն կ'անցնէր Ախուրեան գետը, որուն եզերքը շինուած էր Անի քաղաքը, եւ այժմ շինուած է Ալեքսանդրապօլ քաղաքը: 5. Վանանդ գաւառը այժմ Կարս գաւառին կը համապատասխանէ: Նշանաւոր է Կարսի բերդը:

6. Արագածոսն գաւառը կը տարածուէր Արագած լեռան շուրջ: Այս գաւառին մէջ էին Սարդարապատ քաղաքը, Էջմիածինը:

7. Կոսայի, այժմ Երեւան գաւառ, որուն կեդրոնը կը գտնուէր Երեւան մայրաքաղաքը:

8. Մասիացոսն գաւառը կը տարածուէր Մասիս լեռան շուրջը:

9. Շարուր կը տարածուէր Երասխի հովտին մէջ, Նախիջեւանի հիւսիսային արեւմտեան կողմը:

10. Ոսան կը կոչուէր այն գաւառը, ուր կը գրտնուէին Փրսացոս, Դուին մայրաքաղաքները:

ՓՈՔՐ ՀԱՅՔ ԵՒ ՄԻՋԱԳԵՏՔ

17.—ՓՈՔՐ ՀԱՅՔ ԵՒ ՊՈՆՏՈՍ.—Եփրատի հիւսիսային եւ արեւմտեան կողմերը, մինչեւ Ալիս գետ հին ատեն կը կոչուէր Փոքր Հայք եւ Պոնտոս: Այս երկրին ամենամեծ շղթաները կը կոչուին Պոնտական Պար, Խաղսեաց լեռներ, Անիսօրոս եւ Փոքր Հայքի լեռներ (Սերաստիոյ, Թորատի, Ամասիոյ լեռներ եւայլն): Օտարները Փոքր Հայքը կոչած են Արմենիա Միջոր: (Armenia Minor):


18.—ՄԻՋԱԳԵՏՔ ՀԱՅՈՅ.—Հայկական Միջագետքը կը տարածուի Մեծ Հայքի հարաւային կողմը, Եփրատ եւ Տիգրիս գետերուն մէջտեղ, բուն Միջագետքի հիւսիսային կողմը: Գլխաւոր կեդրոններն են Մծբին եւ Եդեսիա կամ Ուրճա: Մծբինը եղած է Մեծն Տիգրա-

նի առաջին մայրաքաղաքը, ուր Թագ կապեց ան: Իսկ Եդեսիա եղած է մայրաքաղաք Արշամի, Աբգարի եւ անոնց յաջորդներուն: Եփրատ գետին վրայ շինուած քաղաք մըն էր նաեւ Արեւմուտոս կամ Սամոսաս, զոր շինած է Հայոց Արշամ Թագաւորը: Սամոսատի մէջ էր որ Ս. Մեսրոպ տեսիլքով գտաւ Հայոց գիրերը:

ԿԻԼԻԿԻԱ

19.—ԿԻԼԻԿԻՈՅ ԼԵՆՆԵՐԸ.—Եփրատ գետէն մինչեւ Կալիկաղնոս գետը տարածուած լեռները կը կոչուին Կիլիկեան Լեռներ կամ Կիլիկեան Տօրոս, որ երեք մասի կը բաժնուի. Արեւելեան, Արեւմտեան եւ Միջագետային: Արեւելեան լեռները կ'երկարին Եփրատէն մինչեւ ձիհուն գետը: Միջագետային կամ Ռուբինեան լեռները կ'երկարին ձիհուն եւ Սիհուն գետերուն մէջտեղ: Իսկ Արեւմտեան լեռները կը տարածուին Սիհունէն դէպի արեւմուտք: Արեւելեան եւ Արեւմտեան լեռներուն մէջ կան մէյմէկ կիրճեր, որոնք կը կոչուին Դրունգ Կիլիկիոյ:

20.—ԿԻԼԻԿԻՈՅ ԲՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ.—Կիլիկիա կը բաժնուի երկու մասի. Իաւեսային Կիլիկիա եւ Լեոնային կամ Քարային Կիլիկիա: Ծովուն եզերքը մինչեւ լեռները կը տարածուի ընդարձակ դաշտ մը, որ բաւական բարեբեր է, բայց չափազանց տաք ու խոնաւ: Իսկ դաշտերէն վեր կը տարածուին բլուրներն ու լեռները, որ այնչափ բարեբեր չեն:



21.—ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՔԱՂԱՔՆԵՐԸ.—Հայաստան ունեցած է շատ նշանաւոր ու բազմամարդ քաղաքներ, որոնցմէ ոմանք եղած են վաճառաշահ կեդ-


րոններ եւ մայրաքաղաք: Ամէնէն կարեւորները եղած են Անի, Արսաւաս, Վաղարշապատ, Կարս, Վան (Աղքամար), Եդեսիա, Սիս, Դուին, Լամբրոն, Տարսոն, Սեբասիա, Կարին, Երզնկա, Մուշ, Խարբերդ, Տիգրանակերտ, Ալեքսանդրապոլ, Երեւան, եւ այլն:

Անի քաղաքը հիմնուած էր Ժ. դարուն, Աոս Բագրատունի թագաւորին կողմէ: Եղաւ մայրաքաղաք Բագրատունեան թագաւորութեան: Մեծ ու վաճառաշահ կեդրոն մը դարձաւ. ունէր մէկ միլիոնի չափ բնակիչ, 1001 եկեղեցի, հսկայ պարիսպներ, շքեղ պալատներ, հոյակապ շէնքեր: Մէկ քանի անգամ երկրաշարժներէ կործանեցաւ ԺԳ. դարուն: Անոր աւերակները սկսաւ փորել ռուս գիտնական Նիկողոս Մառ եւ երեւան եկան հայ ճարտարապետութեան գեղեցիկ շէնքերուն մնացորդները: Անիի աւերակները, Ախուրեան գետին եզերքը, այժմ կը գտնուին Թուրքերուն ձեռքը:

Արսաւաս.— Հայոց Արտաշէս թագաւորը, հռչակաւոր Աննիբալի խորհրդով, շինեց այս քաղաքը, Երասխ գետին եզերքը, Գրիստոսէ առաջ, երկրորդ դարուն: Անկէ ետք 5-600 տարի, ընդհանրապէս եղաւ մայրաքաղաք: Քանի քանի անգամ կործանեցաւ պատերազմներու միջոցին եւ վերստին շինուեցաւ: Այժմ աւերակ փոքրիկ գիւղ մըն է՝ Երեւանի մօտերը:

Վաղարշապատ հիմնուած էր Հայոց Վաղարշակ թագաւորէն, Քասաղ եւ Հրազդան գետերուն մէջտեղ, դաշտին մէջ: Եղած է մայրաքաղաք: Այս քաղաքին քովիկ կառուցուած են Էջմիածնի վանքն ու եկեղեցիները, ուր կը նստի Հայոց Ընդհանրական Կաթողիկոսը: Վաղարշապատ այժմ փոքրիկ գիւղ մըն է:

Կարս.— Նշանաւոր բերդաքաղաք մըն է: Ժ. դարուն Բագրատունի թագաւորներէն մէկ ճիւղը իբրեւ թա-




Կարս բերդաքաղաք

գաւոր նստաւ այս քաղաքին մէջ եւ կոչուեցաւ «Կարուց թագաւորութիւն»: Կարսը քանի քանի անգամ պատերազմի վայր եղած է: 1920 ին գրաւուեցաւ Թուրքերուն կողմէ:

Վան.— Վանայ ծովին եզերքը նշանաւոր քաղաք մըն է, կառուցուած Ուրարտուի թագաւորներէն: Հին ատեն կը կոչուէր Տոսպ: Վան եղաւ մայրաքաղաք Արծրունի թագաւորներուն, որոնք շքեղ պալատներ շինեցին եւ ամրացուցին քաղաքը, մասնաւորաբար կը նստէին Աղքամար կղզիին մէջ: Արծրունի վերջին թագաւորը՝ Սենեֆեիմ Վանը թողուց եւ մեծ բազմութեամբ՝ ժողովուրդով գաղթեց Սեբասիա (Սվազ) եւ հոն մեռաւ:

Սիս.— Կիլիկիոյ մէջ, Ռուբինեան իշխանութեան մէկ մայրաքաղաքը եղաւ. հիմնուեցաւ 1186 ին Լեւոն Բ. թագաւորէն: Նշանաւոր էր Սիսի մայրավանքը, ուր



Միս եւ մայրավանք

կը նստէր Կիլիկիոյ Կաթողիկոսը, մինչեւ 1922 թուականը, երբ թուրքերը գրաւեցին Կիլիկեան եւ Հայերը գաղթեցին:

Գուրն. — Այրարատեան նահանգի Ոսան գաւառին մէջ, Արտաշատի, Երեւանի մօտերը, կառուցուած էր Մեծն Տրդատի որդի՝ Խոսրով Բ-ի կողմէ: Մարգպաններու եւ ոստիկաններու ատեն մանաւանդ այս քաղաքը եղաւ կեդրոն, մայրաքաղաք եւ կաթողիկոսանիստ: Այժմ փոքրիկ գիւղ մըն է այս շէն քաղաքը:

Լամբրոն քերդաքաղաք մըն էր Տօրոս լեռան վրայ, Օշին հայ իշխանին սեփականութիւնը: Օդատուն, հասելի քաղաք մըն էր: Եղաւ ատեն մը մայրաքաղաք:

Տարսոն. — Հին քաղաք մըն էր, Պօղոս առաքեալին ծննդավայրը, այժմ կը կոչուի Թարսուս: Եղած է մայրաքաղաք Ռուբինեան թագաւորներուն: Ներսէս



Լամբրոնի հովոցները

Լամբրոնացի եպիսկոպոսը, որ Լամբրոնի իշխանին տղան էր, Տարսոնի առաջնորդ եղած էր:

Կարին. — Այս քաղաքը հիմնուած է Հռովմայեցւոց թէոդոս կայսեր օրով, այդ պատճառով կոչուած է Թեոդոսուպոլիս: Արաբները զայն կոչած են Արզր-ռում (Արզ կը նշանակէ բերդ, ռում հռովմէական), ատկէ այժմ կը կոչուի Էրզրում: Արեւելեան եւ արեւմտեան Հայաստանի ճամբուն վրայ է եւ կարեւոր դեր կատարած է: Քանի քանի անգամներ պատերազմի թատերավայր եղած է:

Երզնկա, հին ատեն կը կոչուէր Երիզա: Նշանաւոր էր այս քաղաքին մեհեանը, ուր կը պաշտուէր ոսկեծոյլ Անահիտ դիցուհիին արձանը, որուն կը նուիրուէին ծաղկի փունջեր: Երզնկա շատ անգամներ կործանուած է երկրաշարժներէ:

Մուշ Տարօնի գիւղերէն մէկն էր, բայց յետոյ եղաւ

մեծ քաղաք մը: Խարբերդ Հանձիթ գաւառին մէջ բերդաքաղաք մըն էր: Այժմ նոր Խարբերդ մըն ալ շինուած է, դաշտին մէջ, որ կոչուի Մեզրե—քաղաք:

Տիգրանապոլս հիմնուեցաւ Մեծն Տիգրանի կողմէ, Տիգրիս գետին մէկ ճիւղին վրայ:

Ալեքսանդրապոլ Ախուրեան գետին վրայ նշանաւոր քաղաք է: Այժմ նշանաւոր է իր որբանոցներով, ուր հազարաւոր հայ որբեր կը կրթուին:




Ալեքսանդրապոլ

ԵՐԵՒԱՆ Հրազդան գետին վրայ կառուցուած քաղաք մըն է: Ընդարձակ այգիներով շրջապատուած, ունի գեղեցիկ տեսարան: Մէկ կողմէն Մասիսը, միւս կողմէն Հայկական Պարրը, Արագածը, Գեղամի լեռները գեղատեսիլ տեսարան մը կը բանան Երեւանի առջեւ: Քաղաքը երկաթուղիով կապուած է Անդրկովկասին

ու Եւրոպայի հետ: Երեւանէն կ'անցնի աշխարհի գրեթէ շրջանը ընող միջազգային հեռագրաթելը:

Այժմ Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքն է եւ ունի 150000 բնակիչ, մեծամասնութեամբ Հայ:

Ամբողջ Հայաստանի հանրապետութեան մէջ այժմ կը բնակին շուրջ մեկուկէս միլիոն հայեր, 27,000 քառակուսի քիլոմետր տարածութեան վրայ:



The first thing I noticed when I stepped
 out of the plane was the fresh air. It felt like
 a breath of life after being cooped up for
 hours. The sun was shining brightly, and the
 birds were chirping happily. I took a deep
 breath and smiled. It was a beautiful day, and
 I was finally home.

THE END



ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
 "ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱՆՆԻՒՆ"
 ԳԵՈՂ ՄԵՐՈՂԻ
 ՄԱՆԻՑ ԴԱՍՉԱՐԱՅԻ
 ԳՁԵՅ Գ.Մ
 1924 Վ.

ՄԵՍ ՀԱՅԲԻ ՆԱՀԱԳՈՐԸ	
Ա.	ԲԱՐՁՐ ՀԱՅԸ
Բ.	ՅՈՐՈՐԴ ՀԱՅԸ
Գ.	ԱԶՆՈՐԸ
Դ.	ՏՈՒՐՈՒԹՅԱՆ
Ե.	ՄՈԿԸ
Զ.	ԿՈՐԵԸ
Է.	ՊԱՐՍՎԱՆՅԱՆ
Ը.	ԿԱՊՈՒՐՄԱՆ
Թ.	ՍԻՆՈՒԸ
Ճ.	ԱՐՅԱՆ
Յ.	ՓԱՅՏԱԿԱՐԱՆ
Ժ.	ՈՒՄԻ
Յ.	ԳՈՐԳԱՐԸ
ՅԴ.	ՏԱՅԸ
ՅԵ.	ԱՅՐԱՐԱՅ

Օ ԳՈՐԻՆ (ԿՈՒՆԻՆ)

ԿՐԴՐՈՍ 42

ՄԻՋՈՐԿՐԱԿԱՆ
ՏՈՒՄ

ՏԻԿԱՆԸ

— ՄԵՍ ՀԱՅԲԻ ՆԱՀԱԳՈՐԸ —
 — ԿՐԴԿՐՈՍ —
 — ՓՈՔՐ ՀԱՅԸ —
 — ՆԱՀԱԳՈՐԸ —
 — ՄԱՆԻՑՆԵՐԸ —



ՄԵՒ ԾՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ԼՅՈՍԵՐԸ, ԼՐՃԵՐԸ
 ԵՐ ՔԵՏԵՐԸ
 ————
 ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Գ. ՄԵՍՐՈՊԻ
 ՄԻԼԻՆ ԴԱՍԵՐԱՅՁ ԳՅԵՂ Գ.Մ.
 1924 Մ.

ՄԻՋԵՆԿԱԿԱՆ ԾՈՎ

